



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Հոգեգալուսէն Ետք Չորրորդ Կրտսեա

02 ՅՈՒՆԻ 2017

Կիրակօրեայ Ընթերցումներ Էջ 1  
Ծանուցումներ Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ԵՍԱ.ՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ  
(1.21-31)

**Ի**նչպէս պոռնիկ գարձաւ Սիոնը, հաւատարիմ քաղաքը. ան՝ որ օրինապահութեամբ լեցուն էր. ուր ատեն մը արդարներ կը բնակիին, մինչ հիմա մարդասպաններով բնակուած է: Անարժէք է արծաթդ, ո՞վ երուսաղէմ, ապօրինի շահուած, վաճառորդներդ ջուր կը խառնեն գինիին: Իշխաններդ ինծի դէմ ապստամբած՝ գողերուն գործակից դարձեր են. կաշառք կը սիրեն եւ անիրաւ նուէրներու հետամուտ են. ո՛չ որբերուն իրաւունքը կը պաշտպանեն, ո՛չ ալ այրիներուն դատը կը լսեն: Ուստի այսպէս կ'ըսէ Տէր Տիրակալը, երկնային Զօրքերու Տէրը, իսրայէլի Հզօր Աստուածը.-

«Վա՛յ ձեզի, իսրայէլի՝ իշխաններ, որովհետեւ բարկութիւնս պիտի թափեմ ինծի հակառակողներուն վրայ, եւ վրէժինդրութեամբ պիտի դատեմ ինծի թշնամացողները: Ես ինքս քու մաքրութեանդ պիտի ձեռնարկեմ, եւ ինչպէս հալոցով մետաղը կը գտեն՝ այնպէս ես իմ կրակովս պիտի մաքրեմ քեզ. կորուստի պիտի մատնեմ ապստամբներդ, պիտի բնաջնջեմ բոլոր անօրէններդ, եւ բոլոր ամբարտաւանները պիտի խոնարհեցնեմ: Առաջուան ղեկավարներուդ նման ղեկավարներ պիտի կարգեմ քեզի, եւ խորհրդականներ՝ ին օրերու խորհրդականներուդ պէս. եւ այն ատեն “Արդարութեան Քաղաք” պիտի կոչուիս, պիտի կոչուիս “Մայրաքաղաք, Հաւատարիմ Սիոն”»:

Տէրը իր ողորմութեամբ պիտի փրկէ քու գերեալ գաւակներէդ անոնք՝ որոնք իրաւունք կը պահեն եւ արդարութիւն կ'ընեն: Բայց անօրէններն ու մեղաւորները միասնաբար պիտի խորտակուին. անոնք որ Տէրը մերժեցին՝ միասնաբար պիտի

բնաջնջուին: Ամօթով պիտի մնան անոնք՝ որոնք կուռքեր քանդակեցին ու շինեցին. պիտի ամչնան անոնք որ բեւեկնիներ պաշտելու հաճեցան, եւ անոնք որոնք աստուածներու նուիրուած պարտէզներ փնտուեցին: Անոնք տերեւաթափ բեւեկնիի եւ անջրդի պարտէզի պէս պիտի ըլլան: Ինչպէս վուշի կեղեւները կայծէն կը բռնկին, այնպէս ալ անօրէններն ու մեղաւորները միասնաբար պիտի այրին իրենց գործերէն, եւ ո՛չ ոք պիտի կարենայ զիրենք փրկել:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՆ  
(7.25-8.11)

**Ա**պա ուրեմն ես ինքս միտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց աշխարհ զրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանչական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմնին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի կարենանք լրիւ գործադրել օրէնքին արդար պահանջները: Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեւորը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն

չի հնազանդիր, ո՞չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա  
թէ ինչու անոնք որ մարմնականին կը հետեւին՝  
Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ:

Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը  
բնակի, կը նշանակէ թէ դուք այլեւս մարմնին  
չէք հետեւիր, այլ հոգիին: Իսկ ով որ Քրիստոսի  
հոգին չունի, անոր չի' պատկանիր: Եթէ  
Քրիստոս ձեր մէջն է, թէպէտեւ ձեր մարմինները  
պիտի մեռնին, որովհետեւ մեղանչեցիք, սակայն  
Սուրբ Հոգին դարձեալ կեանք պիտի տայ  
ձեզի, որովհետեւ արդարացաք: Այսինքն՝ եթէ  
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուծա,  
որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց,  
իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝  
պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու  
մարմինները:

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

(12.38-45)

Այն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ  
«Վարդապետ, կ'ուզենք որ հրաշք մը գործես»:  
Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ  
անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ուզէք.

բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն  
զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս  
Յովնան երեք օր՝ ցերեկ ու գիշեր կէտ ձուկին  
փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին  
երեք օր՝ ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի  
ընդերքին մէջ: Դատաստանի օրը նինուէացիները  
ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ,  
որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ  
զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա,  
Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ,  
Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ  
եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր  
երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները  
լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ  
մէկը կայ հոս:

«Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը  
մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝  
հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ  
չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. “Ելլեմ երթամ իմ տունս,  
ուրկէ ելայ”»: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ  
աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս  
մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն  
վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ  
կ'ըլլայ: Գիտցէք որ նոյնը պիտի պատահի նաեւ  
այս չար սերունդին»:

### ՏՆՈՐՀՆԵՔ

Տնօրինեք փափաքող

ընտանիքները,

թող բարեհաճին դիմել  
S. Գառնիկ Աւ. Զինյ. Գոյունեանի,  
հեռածայնելով  
514 909 5203 թիվն:

Այժեկէ՛ք ԵԿԵԿԵԹԻ Նորոգութ ԿԱՅՔԵԶԸ.

[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

Այժեկէ՛ք ԵԿԵԿԵԹԻ ԴՐԱՄՏԵՏՐԻ ԷԶԸ

ԵՒ ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ յԱՅՏԱԵՑՔ (like).

[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](https://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)